

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2015 թ. սեպտեմբերի 8-ին կայացած թիվ 2 նիստի**

Օրակարգում`

- ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամների ֆակուլտետային ընտրություն
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի քննարկում և երաշխավորում
- Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 33 անդամներից նիստին ներկա էին 29-ը:

Գիտական խորհրդի ներկա անդամները մեկ րոպե լռությամբ հարգեցին էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Կ.Վ.Գրիգորյանի հիշատակը :

- **ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամների ֆակուլտետային ընտրություն**

**ԼՍԵՑԻՆ`** ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամների կազմում կենսաբանության ֆակուլտետից առաջադրվելիք թեկնածուների ընտրության հարցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ`** ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամների կազմում կենսաբանության ֆակուլտետից առաջարկել և մանրէաբանության, մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Արմեն Համբարձումի Թռչունյանի և կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Պողոս Հովհաննեսի Վարդևանյանի թեկնածությունները:

Որոշումն ընդունվեց միաձայն:

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի քննարկում և երաշխավորում

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած գիտական թեմաների երաշխավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի դեկան, Կ.Գ.Պ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, Կ.Գ.Պ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ա.Հ. Թռչունյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, Կ.Գ.Պ., պրոֆեսոր Պ.Հ.Վարդևանյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ Կ.Գ.Պ., պրոֆ. Ս.Գ. Նանագյուլյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ՝ Կ.Գ.Պ., դոցենտ. Մ.Ս.Առաքելյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ Կ.Գ.Պ., Ն.Ա.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միջնորդել մասնագիտական փորձագիտական խորհուրդների առջև հետևյալ թեմաներին համապատասխան պետբյուջետային ֆինանսավորում հատկացնելու համար.

1. Ա.Հ. Թռչունյան, մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ «Ածխածին պարունակող արգասիքների և թափոնների օգտագործման նոր մոտեցում. ջրածնի արտադրությունը մթնային և լուսային խմորում իրականացնող բակտերիաների առանձին և խառը կուլտուրաներում»,
2. Պ.Հ.Վարդևանյան, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ «ԴՆԹ-երկու տարբեր լիզանդներ եռակի համակարգերի ֆիզիկաքիմիական և կառուցվածքային ուսումնասիրությունները»,
3. Հ.Հ. Փանոսյան, մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ՝ «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի երկրաջերմային աղբյուրներում թերմոֆիլ մանրէների կենսաբազմազանությունը և դրանց կենսատեխնոլոգիական ներուժը»,
4. Ս.Գ.Նանագյուլյան, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ «Հայաստանի հյուսիսային շրջանների կենսաբազմազանության վրա մարդածին գործոնի ազդեցության ուսումնասիրությունը»
5. Ն.Ռ. Հակոբյան, «Կառուցվածքային կենսաֆիզիկայի» լաբորատորիայի գիտաշխատող՝ «Ֆոսֆոի նոզիտիդների ցիսպլատին-միջնորդավորված փոփոխությունները կորիզում և ներկորիզային կառույցներում»,
6. Մ.Թ.Պետրոսյան, մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ՝ «Հայկական ֆլորայում ներկայացված

Amberboa sosnovskiy Ilijin բույսի մեկուսացված կուլտուրան որպես հակաօքսիդանտային ակտիվությամբ օժտված նյութերի այլընտրանքային աղբյուր»,  
7. Հ.Ա.Մովսեսյան, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ՝ «ՀՀ Սյունիքի հանքարդյունաբերական շրջանների էկոլոգիապես խոցելի հողատարածքների աղտոտվածության նվազեցումը և որակի բարելավումը բույսերի միջոցով»,

8. Գ.Գ.Հովհաննիսյան, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի դոցենտ «ԴՆԹ-ի վնասվածքները և մեթիլացումը շրջակա միջավայրի գենաթունայնության պոտենցիալ կենսացուցիչ հանդիսացող կուսածին և երկսեռ մոդեսների մոտ»,

9. Ն.Ա.Հովհաննիսյան, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ «Հին հայկական ավանդական խաղողի սորտ՝ մորմորի գենետիկական քիմերիզմի ուսումնասիրությունը և կլոնային էմբրիոգենեզի եղանակով սելեկցիոն նոր ձևերի ստացման պոտենցիալի գնահատումը»,

10. Ս.Մ.Մինասյան, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր՝ «Ճեմարանի ավագ դպրոցի սաների գործառութային ցուցանիշների փոփոխությունների համակարգչային մոնիտորինգը և դրանց շտկումը ոչ դեղորայքային եղանակով»,

11. Լ.Հ.Նավասարդյան, կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր՝ «Խմորա-սնկային բջիջների մորֆոֆունկցիոնալ փոփոխությունների և պոլիֆոսֆատային կազմավորումների (վոլյուտին) ուսումնասիրումը ռենտգենյան ճառագայթահարման և ռեպարացիայի պայմաններում»,

12. Ս.Պ.Հովհաննիսյան, կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր՝ «Զրածնի պերօքսիդի ազդեցությունը ազոտային փոխանակությանը մասնակցող որոշ ֆերմենտների ինդուկցիայի վրա կենդանի բջիջներում և ենթաբջջային կառուցվածքներում (պերօքսիսոմներ, լիզոսոմներ)»,

13. Ս.Ա.Կարապետյան, կենսաքիմիայի ամբիոնի դոցենտ՝ «Արգինազի ակտիվության և պոլիամինների քանակության փոխ-կապակցվածության փոփոխության ուսումնասիրությունը, որպես մարդու տարբեր տիպի չարորակ նորա-գոյա-ցությունների ուռուցքային մարկեր»,

14. Ա.Ֆ.Կարապետյան, կենդանաբանության ամբիոնի դոցենտ «Վերին շնչուղիների միկոզներով տառապող հիվանդների լորձաթաղանթի տեղային իմունային պատասխանի ուսումնասիրությունը» :

- **Ընթացիկ հարցեր**

ԼՍԵՑԻՆ՝ բակալավրիատի առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների հարցը: Դեկանի տեղակալ Հ.Հ. Սեմերջյանը նշեց, որ աշխատանքների կազմակերպման նպատակով կենսաբանության, կենսաֆիզիկայի և կենսաքիմիայի բաժանմունքների առաջին կուրսերում նշանակվել են կուրատորներ: Բոլոր ուսանողներին մանրամասնորեն ներկայացվել են ԵՊՀ

ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերը: Հաջորդ շաբաթվա ընթացքում դեկանատի աշխատակիցները կհանդիպեն առաջին կուրսեցիների հետ՝ քննությունների և նրանց հուզող այլ հարցերի քննարկման համար:

Գիտական խորհրդի նախագահ՝  
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.

Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ

Ա.Ֆ.Կարապետյան